**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2**

**ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/19 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**ք. Մեծամոր** **12 մարտի 2026թ.**

2026թ. փետրվարի 13-ից մարտի 12-ը ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն 4 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում տեղի ունեցավ Մեծամոր քաղաքում բազմաֆունկցիոնալ մարզադպրոցի կառուցման աշխատանքների նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/19 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Վ. Բաղդասարյան | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ, |
| Է. Մարտիրոսյան՝ | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի առաջատար մասնագետ, |
| Ս. Սարգսյան՝ | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ, |
| Ա. Ավետիսյան՝ | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի առաջին կարգի մասնագետ, |
| Ա. Մխիթարյան՝ | Մեծամոր համայնքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման և տրանսպորտի բաժնի պետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Վ. Բաղդասարյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Վ. Վարդանյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից և նիստին էլ մասնակցել են բոլոր հինգ անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
2. Ընթացակարգին ներկայացված հայտերը գնահատելու մասին:
3. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:
4. Ընթացակարգի Մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված Մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
5. Ընթացակարգի ընտրված Մասնակիցներ հայտարարելու մասին:
6. Ընթացակարգի արդյունքում հրապարակվող հայտարարությունների տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:
7. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:
8. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. փետրվարի 13-ին, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն 4 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում ժամը 16:30-ին նախագահը նիստը հայտարարեց բացված, տեղեկացրեց, որ գնման գործընթացն իրականացվում է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և հրապարակեց գնման հայտով սահմանված ձեռքբերվող գնման առարկա/ներ/ի գնման գինը/գները.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1-ին | Մեծամոր քաղաքում բազմաֆունկցիոնալ մարզադպրոցի կառուցում, կահավորում և հարակից տարածքի բարեկարգման և կառուցման և ենթակա տարածքի աշխատանքների նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայություններ | 13000000 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/19 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձ/ը/ինք/ /այսուհետ՝ նաև Մասնակից/ներ/ը/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցեներ | Հեռախոս | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «ՇԻՆ-ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ | Ք. Գավառ, Ազատության35/33 | +37493810351 | vigenpapmisho@gmail.com | 08420977 |
| 2 | «ԽՈՅԱՆՔ» ՍՊԸ | ՀՀ Կոտայքի մարզ ք. Հրազդան Մաքրվան թաղ. Ն.Շնորհալու19 | +37493151230 | heg.53@mail.ru | 03018972 |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 3. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾՐԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ և ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին, ինչպես նաև արձանագրեց, որ Մասնակցի կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ՝

«ՇԻՆ-ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված.

- պայմանագիրը չի համապատասխանում հրավերի 1-ին մասի 2.4 կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ ներկայացված հաշիվ վավերագրերը հաստատված չեն պայմանագրի կողմերի կողմից,

հայտում բոլոր մասնագետների մասով բացակայում է՝ «Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ու որակավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 30.11.2023թ. թիվ 2106-Ն որոշմամբ սահմանված կարգով տրամադրված շարունակական մասնագիտական զարգացման հավաստագրերի լուսապատճենները և համապատասխան ներդիրի ներքո պատշաճ ձևով մատուցված նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայություններ մատուցած լինելը հիմնավորելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթը (օրինակ՝ պայմանագիր, տեղեկանք և այլն), դիպլոմը համաձայն հրավերի 1-ին մասի 2.4 կետի 4-րդ ենթակետի պահանջներին:

**«ԽՈՅԱՆՔ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում բոլոր մասնագետների մասով բացակայում է՝ համապատասխան ներդիրի ներքո պատշաճ ձևով մատուցված նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայություններ մատուցած լինելը հիմնավորելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթը (օրինակ՝ պայմանագիր, տեղեկանք և այլն) համաձայն հրավերի 1-ին մասի 2.4 կետի 4-րդ ենթակետի պահանջներին, ինչպես նաև նույն ենթակետով սահմանվել էր, որ մասնակիցը պետք է ներկայացնի Էլեկտրաէներգետիկ ճարտարագետ

նախագծող 1-ին կարգի հավաստագրով, Ջերմագազամատակարարման և օդափոխության ճարտարագետ նախագծող 1-ին կարգի հավաստագրով, Ջրամատակարարման և ջրահեռացման ճարտարագետ նախագծող 1-ին կարգի հավաստագրով, Տրանսպորտային ուղիների և կառույցների ճարտարագետ նախագծող 3-րդ կարգի հավաստագրով, Կապի համակարգերի ճարտարագետ նախագծող 1-ին կարգի հավաստագրով, Ճարտարապետ Ա դաս կամ Ա1 դաս արտոնագրով, Ճարտարագետ կոնստրուկտոր Ա դաս կամ Ա1 դաս արտոնագրով մասնագետներ վերջին 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով, սակայն մասնակից կողմից ներկայացված կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկատվություն փաստաթղթում համաձայն հավելված 1.3-ի բացակայում է՝ Կապի համակարգերի ճարտարագետ նախագծող 1-ին կարգի հավաստագրով, Ճարտարապետ Ա դաս կամ Ա1 դաս արտոնագրով, Ճարտարագետ կոնստրուկտոր Ա դաս կամ Ա1 դաս արտոնագրով մասնագետների մասին տեղեկատվությունը, իսկ ներկայացված մասնագետները չունեն վերջին 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ և ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակից/ներ/ի գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| Գնման առարկայի | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված գնման գին | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| չ/հ | անվանումը | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1-ին | Մեծամոր քաղաքում բազմաֆունկցիոնալ մարզադպրոցի կառուցում, կահավորում և հարակից տարածքի բարեկարգման և կառուցման և ենթակա տարածքի աշխատանքների նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայություններ | «ՇԻՆ-ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ | 13000000 | 9744000 | 1948800 | 11692800 |
| | | «ԽՈՅԱՆՔ» ՍՊԸ | | 11950000 | 0 | 11950000 |

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

2026թ. մարտի 10-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները, նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և ծանուցելով առաջարկել Մասնակից/ներ/ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանություն/ներ/ը:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

2026թ. մարտի 12-ին Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Մասնակից/ներ/ի կողմից սահմանված ժամկետում և կարգով՝ ներկայացվել են արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակը:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

2026թ. մարտի 12-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:
3. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-ին | «ՇԻՆ-ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ | բավարար |
| | «ԽՈՅԱՆՔ» ՍՊԸ | բավարար |

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

2026թ. մարտի 12-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած Մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և այդպիսին չճանաչված Մասնակիցներին, որոնք ներկայացված են ստորև բերվող աղյուսակում.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի N | Մասնակցի անվանումը | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գները /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|
| 1-ին | «ՇԻՆ-ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ | X | 9744000 |
| | «ԽՈՅԱՆՔ» ՍՊԸ | | 11950000 |

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոգրյալը, 2026թ. մարտի 12-ին Հանձնաժողովը որոշեց, որպես Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով ընտրված և այդպիսին չճանաչված մասնակից հայտարարել սույն արձանագրության 4-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից այն մասնակիցներին, ովքեր ներկայացրել են նվազագույն գնային առաջարկ:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Վ. Վարդանյանը Հանձնաժողովին ներկայացրեց Ընթացակարգի արդյունքում հրապարակվող հայտարարության/հայտարարությունների տեքստերի նախագծերը:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
2. Հաստատել Ընթացակարգի արդյունքում հրապարակվող հայտարարության/հայտարարությունների տեքստը:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 7. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:
2. Գնման ընթացակարգի շրջանակում հարցումներ չեն ներկայացվել և պարզաբանումներ չեն տրվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,
2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակից/ներ/ին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ սահմանված ժամկետում պայմանագիրը չստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում մասնակիցը կզրկվի պայմանագիրը կնքելու

իրավունքից՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Վ. Բաղդասարյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Է. Մարտիրոսյան ____________

Ս. Սարգսյան ____________

Ա. Ավետիսյան ____________

Ա. Մխիթարյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Վարդանյան ____________